ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«27» նոյեմբերի 2024թ. № 1152

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ՏԻԳՐԱՆ ՌՈԲԵՐՏԻ ՕԽԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՎՏՈՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԱՅԱՆԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԵՎՏՐԻ ՍՐԱՀՈՎ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 12-Ի ԹԻՎ 1093 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի թիվ 600-Ն որոշմամբ, հիմք ընդունելով «ԳԵՈԿԱԴ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2679473 վկայականը և Տիգրան Ռոբերտի Օխանյանի ներկայացուցիչ Վահագն Նորիկի Պապիկյանի դիմումը՝ ***որոշում եմ***.

1. Տիգրան Ռոբերտի Օխանյանին սեփականության իրավունքով պատկանող 06-006-0498-0016 և 06-006-0498-0048 կադաստրային ծածկագրերով 0,036 հեկտար մակերեսով հողամասի վրա գտնվող 546,40 քառակուսի մետր մակերեսով ավտոտեխսպասարկման կայանի գործառնական նշանակությունը փոփոխել, որպես առևտրի սրահ օգտագործելու համար:
2. Հաստատել Տիգրան Ռոբերտի Օխանյանին սեփականության իրավունքով պատկանող 06-006-0498-0016 և 06-006-0498-0048 կադաստրային ծածկագրերով բնակավայրերի նպատակային նշանակության 0,036 հեկտար մակերեսով հասարակական

գործառնական նշանակության հողամասի և դրա վրա գտնվող անշարժ գույքի հատակագիծը:

3. Ուժը կորցրած ճանաչել Սպիտակ համայնքի ղեկավարի 2024 թվականի նոյեմբերի 12-ի «Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող՝ Տիգրան Ռոբերտի Օխանյանին սեփականության իրավունքով պատկանող ավտոտեխսպասարկման կայանի գործառնական նշանակությունը առևտրի սրահով փոփոխելու և անշարժ գույքի հատակագիծը հաստատելու մասին» թիվ 1093 որոշումը:

4. Սույն որոշման 1-ին կետում կատարված փոփոխությունը ենթակա է պետական գրանցման:

5. Սույն որոշումը տրամադրել Կադաստրի կոմիտե՝ սահմանված կարգով պետական գրանցում կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա.ՄԱԹՈՍՅԱՆ

2024թ. նոյեմբերի 27
ք.Սպիտակ